




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16777

362

p-62

192--

ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՐՐԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐ. ՄԱՐՄՆԻ

1922

Ը-140

304

ԻՆՁՈՒ

ԱՅՍ ՏԱՐԻ ԵՒՍ

ՋԵՌՔ ԿԸ ԿԱՐԿԱՌԵՆՔ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ



362
h-62

ՏՊԱԳՐ. Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

2010

362

h-62



2002

36265-66

ЧИТАЛИЩЕ
„КРАСИРАЦ“

ԻՆՉՈՒ ԱՅՍ ՏԱՐԻ ԵՒՍ

224

Ձեռքի կը կարգավորենք ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻՅԱՆ

Անցնելէ առաջ սոյն գերազանցօրէն նուիրական աշխատանքին որ մեզ վստահուեցաւ, անհրաժեշտ նկատեցինք անգամ մը, ամփոփ կերպով անդրադառնալ վերջին երեք տարիներու ընթացքին տեղի ունեցած այն բոլոր իրադարձութեանց որոնց առարկան մեր որբերը եղան:

Արդարացի իր այս անդրադարձումին մէջ, «Որբերու Փրկութեան Կեդր. Մարմին» պարտաւոր նկատեց ինքզինքը, միանգամայն իրրեւ լաւագոյն ազդակ առաջադրուած նպատակին յաջողութեան, իրեն հետ եւ իրեն չափ տեղեակ պահել նաեւ հայ հասարակութիւնը, որուն հոգածութեան եւ գուրգուրանքին շնորհիւ, ԱՆՈՒՔ, ապագայի մեր լաւագոյն յոյսերը, իրենց բամբաղը ու սրտցաւ վիճակէն դուրս կրցեր են ունենալ փրկութեան, մխիթարանքի եւ յոյսի տրամադրութիւններ:

Մ'ըսէք թէ Որբը՝ նման թռչունի՝
Չուրկ է տաք բոյնէ, յարկէ ընտանի,
Չունի ապաւէն, հոգացող չունի՝
—Ձէ՞ որ Ազգն անոր խնամք կը տանի:

50770-Ա.Կ.

Մեզ բոլորիս ծանօթ են արդէն, ահաւոր եղեռնէն յետոյ այն բոլոր իրադարձութիւնները, որոնցմով ստուար թիւ մը զրկուածներու՝ մեր խնամքին կը յանձնուէր եւ իբր այդ Պոլիսը կը դառնար գլխաւոր կեդրոնը իր օղկաններով Ազգ. ելեւմտական ու ինամատարական :

Այսպէս, 1918ի ինքնամփոփման օրերուն նախ կ'ունենանք միայն Պոլսոյ մէջ մօտաւորապէս 2800 երկսեռ որբեր, որոնց մատակարարութիւնը կը յանձնուի զանազան թաղերու մէջ հետզհետէ հիմնուող որբանոցներու :

Անկէ վերջ, օր ըստ օրէ անոնց թիւին աստիճանական յաւելումը կը սկսի, այնպէս որ մինչեւ 1920, 3500 որբեր ինամատարութեան հոգածութեան առարկայ կը դառնան: Ընդհանուր այս թիւը անշուշտ տեւական փոփոխութիւն մը կ'ունենայ՝ տրուած ըլլալով մէկ կողմէ շարունակաբար ազատագրուածներու յաւելումը, իսկ միւս կողմէ՝ ամուսնութեամբ, հեռացումով, մահով, ազգայիններու կողմէ որդեգրութեամբ տեղի ունեցած նուազումը :

Ես որք մ'էի անընտանիք՝
Ջուրկ հօր ու մօր խնամքէն
Ազգն ինձ տուաւ հիւղ ու տանիք
Ինչո՞ւ բախտիս ընեմ քէն.

Այս առթիւ հետաքրքրական էր անշուշտ յիշել որ մինչեւ ցարդ եղած են. —

189 որդեգրուածներ, 50 ամուսնացածներ՝ բոլորը աղջիկ, 130 հեռացածներ եւ 150 մեռածներ :

Թիւերու այս փոփոխութեամբ ներկայիս որբերու ընդհանուր թիւը կը հասնի 3325ի, որոնք ըստնուած են 27 զանազան կեդրոններու եւ որոնց մատակարարութեան ձեւը երեքի է բաժնուած :

Ա.—10 Խնամաստրական Որբանոցներ, որոնք ուղղակի ինամատարութեան կողմէ կը հոգացուին եւ որոնց մէջ պատասպարուած որբերու թիւն է 1552 մանչ եւ 751 աղջիկ. գումար՝ 2303:

Բ.—13 Նպաստընկալ Որբանոցներ, որոնք մասամբ կ'օգտուին Ելեւմուկի Սնտուկէն՝ ունենալով հոգածութիւնը 149 մանչերու եւ 643 աղջիկներու. գումար՝ 792 :

Գ.—4 Ինքնապահ Որբանոցներ, որոնց խնամքը յանձնուած է տեղական մարմիններու, ունենալով 219 մանչ եւ 11 աղջիկ. գումար՝ 230 որբ:

Հրաբորբօր անապատէն
Եւ անողոր մահուանէ
Մեզ ազատեց բարին Աստուած.
Ա'լ չենք վախնար մէկ բանէ.





Որքունին երջանիկ է որքան ասեն որ ազգը
 իր գուրգուրանքը եւ հոգածութիւնը
 չի զլանար իրեն :



Ահա որք մը որ առանց բառ մը իսկ կարգալ գրել
 գիտնալու՝ մեկուկես տարուան մէջ կը բոլորէ իր
 նախակրթական ուսումը եւ այժմ կը հետեւի
 երկրորդական վարժարանի ուսման:

Ա. Խնամատարական 10 Որբանոցները կը գտնուին Քուլիի (Կեդրոնական) 900 մանչ, Նեքի Քուլի (Դարմանատուն) 246 մանչ եւ 42 աղջիկ, Պեյ-լեպէյի 253 մանչ, Սկիւսար 196 աղջիկ, Պեքիկբաւ 158 աղջիկ, Պալաթ 141 աղջիկ, Խասգիւլ 124 աղջիկ, Գում-Գաբու (Արհեստատուն) 105 մանչ, Աւնաուս-գիւլ (Արհեստանոց) 90 աղջիկ, Գուրու-Չեմէ 48 մանչ. Գումար 1552 մանչ եւ 751 աղջիկ:

Բ. Նպաստընկալ 13 որբանոցները կը գտնուին Գասր-Գիւլ (Դպրոցատէր Տիկնանց) 168 աղջիկ, Օրբագիւլ 162 աղջիկ, Սամաթիա (Ս. Աննա) 105 աղջիկ, Մագրի-գիւլ (Պէգազեան) 50 մանչ եւ 10 աղջիկ, Մագրի-գիւլ (Որբանոց) 59 աղջիկ, Աւնաուս-գիւլ (Հայանուէր) 56 մանչ, Բեքա (Ս. Աննա) 41 աղջիկ, Հ. Վ. Խաչի դարմանատուններ եւ մանկանոց 29 մանչ՝ 49 աղջիկ, Նեքի-Գուլի (Հիււանդանոց) 14 մանչ եւ 12 աղջիկ. գումար 149 մանչ եւ 643 աղջիկ:

Գ. Ինքնապահ 4 որբանոցները կը գտնուին. Բեքա (Էսայեան) 81 մանչ, Գասր-գիւլ 74 մանչ, Պոյանը-գիւլ (Ամերիկեան Դարմանատուն) 64 մանչ.

Զի գրկեր մեզ Աստուած բախտէ
Կը պաշտպանէ իր Աջով.
Մեր անդուլ ջանքը կը յաղթէ
Սուրբ հաւատքով ու խաչով:

Պոյանը-գիւլ 11 աղջիկ. գումար 219 մանչ եւ 11 աղջիկ:

Այս վիճակագրութենէն դուրս կը մնան ճատտէ Պօսթանի Լորտ Մէլըրս Ֆրնտի, էրէնքէօյի ամերիկեան եւն. եւն. Որբանոցները:

Վերելի ցուցակէն որոշ կ'երեւի արդէն թէ՝ անհրաժեշտ միջոցներ խորհուած են՝ կարելի չափով նուազեցնելու համար նիւթական պահանջը, ըստ այնմ աշխատելով առաւելապէս որբերը ի վիճակի դարձնել իրենց ինքնապահպանման՝ տալով անոնց միջոցներ իրենց մտաւորական եւ արհեստական զարգացման համար:

Այսպէս, մաս մը երկսեռ ուսանող որբերէ գատ, որոնք իրենց ուսումը կը ստանան ազգային եւ այլ նախակրթարաններու, ինչպէս նաեւ երկրորդական վարժարաններու մէջ, կարելի եղած է նաեւ հաստատել մասնաւոր աշխատանոցներ, ուր ամէն կարգի արհեստներ ի գործ կը դրուին ամէն մէկի ընդունակութեան համաձայն:


Իբրեւ արդիւնք այս կարգադրութեան, յետ այսու ամէն շրջանի կ'ունենանք բաւականաչափ

Միթէ չունի՞մ ես հոգածու
Բարեգութ ձեռքը Ազգիս.
Ան զիս փրկեց—փա՛ռք Աստծու,
Պատսպարեց կրթեց զիս:

Թիւ մը որբերու , որոնք անհրաժեշտ պատրաս-
տութեամբ հրապարակ կ'իջնեն անձնական ջան-
քերով իրենց ապրուստն ու կեանքը ապահովե-
լու՝ որով մինչեւ մի քանի տարի Ազգ. Կեդր. Սըն
տուկը արդէն իսկ բոլորովին ազատուած պիտի
ըլլայ որբերու խնամատարական հոգէն :

Այս տուեալներով որբերու Փրկութեան Մար-
մինս անգամ մը եւս կը դիմէ հայ ժողովրդեան
զգացումներուն , վստահ ըլլալով որ ան իր օժան-
դակութիւնը չպիտի զլանայ երբեք , նա մանա-
ւանդ Կաղանդի եւ Ծնունդի այս օրերուն՝ երբ
իր ընտանեկան տաքուկ բոյնին մէջ խորհի պա-
հիկ մը ԱՆՈՆՅ ՎՐԱՅ , ԱՆՈՆՅ՝ որոնք զուրկ են
այդ երջանկութենէն : Մարդկային ո եւ է զօրու-
թիւն չպիտի կարենայ դարմանել խեղճ որբերուն
այդ զրկանքը , սակայն ամէն ոք պիտի կրնայ
մնղմնլ անոնց ցաւը օժանդակելով անոնց նիւ-
թական մատակարարութեան եւ այդ բալասանը
վստահ ենք որ ոչ ոք պիտի խորհի զլանալ :

Մենք ա՛յն ատեն պիտի տանինք
Մեր վերջնական յաղթանակ
երբ սերտ սիրով միաբանինք,
եւ դաւանինք մէկ հանգանակ.



Պ. Քանձապետ

Որբերու Փրկութեան Մարմնի

Փառաբերով իմ լուսնս եւս ի
սպաս դնել հազարաւոր որբերու փրկու-
թեան գործին, ընդ զրոյս կ'ուղարկեմ
Զեզ.....:

Կը խնդրեմ որ հաճիր ի փոխարէն տրա-
մադրել ինձ նոյն արժէքով որբերու նկար-
ներով զարդարուն տոմսերէն:

Յարգանք

ՀԱՍՅԻ. ...

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0050370

16727

